

## ԱՐՏԱԹՈՂՔԻ ԽԼԱՐԱՐԻ ՄՈՆՏԱԺՄԱՆ ՄԱԾԻԿ



Արտիկուլ	<b>0890 100 045</b>
Փ./հատ	1/12
Զանգվածը	140 գ
Գույնը	Մոխրագույն
Հոտը/բույրը	Անհոտ
Քիմիական կազմը	Նատրիումի սիլիկատ
Պիտանելությունը՝ արտ. օրվանից	12 ամիս

### Կիրառման բնագավառները

Նախատեսված է արտանետման համակարգի բաղադրատարրերի տեղադրման, փոխման և միացման կետերի հերմետիկացման համար

### Ցուցում

Կիրառումից առաջ օգտագործման մակերեսները մաքրել չոր ժանգից և յուղից: Այնուհետև մոնտաժման մածուկը կիրառել քանդովի միացումների վրա: Արտաթողման մասերը հավաքել և ամրացնել:

**Փափուկ մածիկ, նախատեսված է արտանետման համակարգի կցորդիչների և կցաշուրթերի արագ, հեշտ և լրիվ անգազանցիկ հերմետիկացման համար**

- Չկա եռակցման անհրաժեշտություն
- Տաք արտանետվածքները մածիկը դարձնում են մետաղի նման ամուր
- Ջերմակայուն է մինչև մոտ. 800°C
- Երկարատև հերմետիկ խցվածք
- Դիմացկուն է հարվածների և թրթռումների նկատմամբ
- Միացումների վրա կոռոզիա չի առաջացնում, ինչը հեշտացնում է ապամոնտաժումը

## ԽԼԱՑՈՒՑԻՉԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ՄԱԾՈՒԿ



Արտիկուլ	<b>0890 100 046</b>
Փ./հատ	1/10
Զանգվածը	200 գ
Գույնը	Մոխրագույն
Հոտը/բույրը	Անհոտ
Պիտանելությունը՝ արտադր. օրվանից	12 ամիս



### Կիրառման բնագավառը

Նախատեսված է արտաթողքի համակարգի անցքերի և ճեղքերի վերանորոգման համար

Օգտագործման հրահանգները խորհուրդներ են՝ հիմնված մեր կողմից արված թեստերի և մեր փորձի վրա: Ցուրաքանչյուր օգտագործումից առաջ անհրաժեշտ է փորձել, ինքնուրույն կատարել սեփական փորձերը: Կիրառման ոլորտի բազմազանության, ինչպես նաև պահպանման և վերամշակման պայմաններով պայմանավորված՝ մենք պատասխանատվություն չենք կրում վերամշակման որոշակի արդյունքի համար: Մեր տեխնիկական սպասարկման անվճար ծառայությունը ապահովում է տեխնիկական ինֆորմացիայով կամ հանդես է գալիս որպես խորհրդատվական ծառայություն: Այն չի կրում իր վրա պատասխանատվություն, բացառությամբ այն դեպքերի, երբ մեր կողմից տրամադրված խորհրդատվությունը կամ ինֆորմացիան գտնվում են մեր պայմանագրով համաձայնեցված կետերի շրջանակներում: Մենք երաշխավորում ենք մեր արտադրանքի կայուն որակը: Մինչդեռ մեր կողմից արվում են տեխնիկական փոփոխություններ հետագա զարգացման ավելի նպաստելու համար:

**Արտաթողքի համակարգի փոքր անցքերը և ճեղքերը կարող են հեշտությամբ և անգազանցիկ կիպացվել**

- Չափազանց ջերմակայուն է
- Կայուն է ջերմաստիճանի տատանումների նկատմամբ
- Եռակցման կամ արտաթողքի ապամոնտաժման անհրաժեշտություն չկա

### Ցուցում

1. Մետաղալարային խոզանակի շնորհիվ հեռացնում է կեղտն ու ժանգը
2. Այնուհետև անրաժեշտ է, որ աշխատի շարժիչը՝ արտաթողքի համակարգը տաքացնելու համար
3. Կիրառման ենթակա մակերեսները թեթև թրջել, այնուհետև թաց ձեռքերով նյութը տարածել մշակման ենթակա մակերեսին: Մածուկը պետք է արտաքինից լավ, հավասարաչափ տարածել:

### Ցուցում

Առավել արագ ամրացման համար գործի գցել շարժիչը և միացված թողնել մոտ քառորդ ժամ: